

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման կանոնների միանման կիրառումն ապահովելու մասին

(Մոսկվա, 2008 թվականի դեկտեմբերի 12)

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշման մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրով սահմանված կանոնների միանման կիրառումն ապահովելու ձգտումով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրով սահմանված կանոնների միանման կիրառումն ապահովելու նպատակով, Կողմերը՝

քննարկում են Կողմ հանդիսացող պետությունների մաքսային մարմինների պրակտիկ գործունեության ընթացքում առաջացող եւ Համաձայնագրի կիրառման հետ կապված որոշակի պրոբլեմատիկ հարցեր,

հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը՝ եզակի մոտեցումներ են մշակում՝ ուղղված Համաձայնագրի դրույթների, այդ թվում՝ մաքսային գնահատականի Համաշխարհային մաքսային կազմակերպության տեխնիկական կոմիտեի փաստաթղթերում ներառված դրույթների մեկնաբանմանը,

Մաքսային միության մասնակից պետություններում ապրանքների մաքսային արժեքի սահմանման հարցերով իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ տեղեկությունների փոխանակում են իրականացնում,

առաջարկություններ են պատրաստում՝ Համաձայնագրով սահմանված կանոնները միանման կիրառելու համար:

Հոդված 2

Հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հոդվածում նշված գործողությունների բնույթն ու ծավալը՝ Կողմերը համաձայնեցին.

Մաքսային միության մարմինների կառուցվածքում հաստատել համապատասխան ենթաբաժին, որը պատասխանատու է Համաձայնագրով սահմանված կանոնների միանման կիրառումն ապահովելու համար,

ապրանքների մաքսային արժեքի ոլորտում նորմատիվ իրավական կարգավորումների առումով գործառույթներ իրականացնող, Կողմեր հանդիսացող պետությունների գործադիր իշխանության մարմիններին, լիազորություններ տալ՝ նշանակելու համապատասխան ենթաբաժինը, որը պատասխանատու կլինի Համաձայնագրով սահմանված կանոնների միանման կիրառումն ապահովելու համար:

Հոդված 3

Սույն Արձանագրության դրույթների իրականացման հարցերի վերաբերյալ գրագրությունը կատարվում է ռուսերենով:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վեճերը կարգավորվում են Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, այդպիսի վեճերը համապատասխան Կողմերից որեւէ մեկի նախաձեռնությամբ, փոխանցվում են Եվրասիական տնտեսական համայնքին:

Հոդված 5

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Արձանագրությունում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 6

Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրան միանալու եւ դրանից դուրս գալու կարգը սահմանվում է «Մաքսային միության իրավապայմանագրային բազայի ձեւավորմանն ուղղված միջազգային պայմանագրերն ուժի մեջ մտնելու, դրանցից դուրս գալու եւ դրանց միանալու կարգի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի արձանագրությամբ:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2008 թվականի դեկտեմբերի 12-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Արձանագրության բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրման հարցերով կոմիտեն է՝ նախքան Մաքսային միության հանձնաժողովի ավանդապահի գործառույթները փոխանցելը:

Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Արձանագրության հաստատված պատճենը:

(ստորագրություններ)